ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- 17

*հերթական համարը*

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

*ՀՀ Լոռու մարզի Փամբակ (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-9 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ*

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Լոռու մարզի Փամբակ (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-9 համակցված տարածական պլանավորման նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին:

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը ՀՀ Լոռու մարզի Փամբակ (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) համայնքի ղեկավարին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը, որից հետո հաստատել ՀՀ Լոռու մարզպետի համապատասխան որոշմամբ:

3. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. ՀՀ Լոռու մարզպետին և Փամբակ (Փամբակ, Ազնվաձոր, Անտառամուտ, Արջուտ, Բազում, Գուշար, Դեբեդ, Եղեգնուտ, Ժամատուն, Լեռնապատ, Լեռնաջուր, Ծաղկոց, Մարգահովիտ, Ձորագետ, Ձորագյուղ, Վահագնաձոր, Վահագնի, Քարաբերդ բնակավայրերը) համայնքի ղեկավարին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետերի պահանջների կատարումը:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, «12» «օգոստոսի» 2024թ.